

Կարծիք

Անահիտ Հրանտի Խլոպուզյան «Ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարումը հանրակրթական դպրոցում» խորագրով ստենախոսության վերաբերյալ

ՀՀ հանրակրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումները պահանջում են անհատական մոտեցում յուրաքանչյուր երեխայի զարգացման նկատմամբ:

Կրթության համակարգերն ու զարգացման ռազմավարությունները, ինչպես նշում է Ա. Խլոպուզյանը, միտված են «կրթել ու դաստիարակել առողջ ու հավասարակշռված անձնավորություններ, որոնք կկարողանան արձագանքել փոփոխվող պահանջներին ու մարտահրավերներին»: Եվ այս համատեքստում դպրոցում կարևոր խնդիրներից է դառնում սոցիալ-մանկավարժական հարմարման գործընթացների բարելավումը, հատկապես նրանց համար, ովքեր ունեն տարբեր խնդիրներ, օրինակ՝ ձախլիկ երեխաների համար: Ձախլիկությունը լայնորեն տարածված երևույթ է, ըստ տարբեր գիտական աղբյուրների՝ այն հանդիպում է բնակչության մոտավորապես 10-13%-ի մոտ: Մակայն, չնայած տարածվածությանը, կրթական գործընթացում ձախլիկ երեխաների կարիքները հաճախ հաշվի չեն առնվում բավարար չափով, ինչը կարող է հանգեցնել ուսուցման, հարմարվողականության և սոցիալական ինտեգրման դժվարությունների:

Ներկայիս կրթական միջավայրում, որը միտված է ներառականության, անհատականացման և յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքների հաշվառմանը, սովյալ հիմնահարցն ունի տեսական ու գործնական մեծ կարևորություն, ինչով էլ և պայմանավորված է հետազոտության անհրաժեշտությունն ու արդիականությունը:

Նշենք, որ հստակ ձևակերպված է հետազոտության թեման՝ «Ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարումը հանրակրթական դպրոցում»: Այն արտացոլում է աշխատանքի հիմնական ուղղվածությունը, այն վերջնարդյունքը, նպատակը, որն իր առջև դրել է հեղինակը՝ հանգամանորեն ուսուսմասիրել և վերլուծել ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում՝ բացահայտելով հարմարման գործընթացի վրա ազդող գործոններն ու պայմանները:

Հետազոտության նպատակից բխում են իրար ճիշտ հաջորդող, տրամաբանորեն կապված խնդիրները՝ թվով 7:

Ստենախոսության ներածությունում առկա են պաշտպանությանը ներկայացվող դրույթներ (6), որոնք արտացոլում են հանրակրթական դպրոցում ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման տեսական հիմնավորումները, հարմարման գործընթացի իրականացման, կառավարման, վերահսկման գործոնները, մեխանիզմները և այլն: Պաշտպանության ներկայացվող դրույթները գիտականորեն հիմնավորված և համահունչ են հետազոտության նպատակին ու խնդիրներին:

Ստենախոսության գիտական նորույթն անվիճելի է, քանի որ հետազոտության շրջանակում առաջին անգամ համակողմանի ուսուսմասիրվել է ներկայացված

հիմնախնդիրը, հստակեցվել են հարմարվելու դժվարությունները, դրանց սոցիալական, հոգեբանական և մանկավարժական դրսևորումները, հիմնավորվել են ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման մեխանիզմներն ու առանձնահատկությունները, որոնք հաստատվել են սոցիոլոգիական հարցումների արդյունքների համադրմամբ:

Ատենախոսության տեսական ուսումնասիրման արդյունքները կնպաստեն տվյալ հիմնախնդրի տեսական դրույթների հարստացմանը, անշուշտ, կընդլայնեն ուսումնասիրվող գործընթացի վերաբերյալ գիտական պատկերացումները և հստակ կարող են ծառայել որպես հետագա գիտական ուսումնասիրությունների հիմք:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ ներկայացված եզրակացությունները, մոտեցումները, առաջարկությունները կարող են արդյունավետորեն կիրառվել կրթական պրակտիկայում, մասնագիտական գործունեության ընթացքում, ծառայել որպես ուղեցույց ուսուցիչների համար, սոցիալ-մանկավարժական աջակցության ծրագրեր մշակելու դեպքում և այլն:

Ատենախոսության ծավալը կազմում է 151 էջ: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության բովանդակությունն արտացոլված է աշխատանքի երեք գլուխներում: Առաջին գլուխը՝ «Ձախլիկությունը որպես կենսազենետիկական և սոցիալական երևույթ», ներկայացված է 6 ենթագլխով: Ձախլիկության երևույթն ունի տարբեր մոտեցումներ մասնագիտական, գիտական գրականության մեջ՝ գենետիկական, նեյրոֆիզիոլոգիական, հոգեբանական, սոցիոմանկավարժական և այլն: Սակայն դրանց միջև չկա միասնական տեսական համակարգ: Հեղինակին հաջողվել է ենթագլուխների միջոցով ցուցաբերել երևույթի նկատմամբ համալիր մոտեցում ուսումնասիրման ընթացքում: Օրինակ, ուսումնասիրել է ձախլիկության էությունը բժշկական գրականությունում, մանկավարժության, նեյրոբանական տեսության մեջ: Ուսումնասիրելով այս տարբեր մոտեցումները՝ 1.1 ենթագլխում «Տեսական մոտեցումներ ձախլիկության և դրա առաջացման պատճառների մասին», Անահիտ Խլոպուզյանն ընդհանրացնում է դրանք և նշում, որ ձախլիկությունը համապարփակ երևույթ է, որի ուսումնասիրությունը պահանջում է ինտեգրված մոտեցում՝ ներառելով ինչպես կենսաբանական, այնպես էլ հոգեբանական և սոցիալ-մանկավարժական գործոնների համադրական վերլուծություն: Յուրաքանչյուր հետազոտության նշանակությունը, սակայն, ոչ միայն ընդհանրացնելու, ամփոփելու մեջ է, այլ նաև բաց հարցերի մատնանշում, չուսումնասիրված հարցերն առաջ քաշելու, նոր ուսումնասիրություններ սկսելու համար: Դրա մասին է խոսում հեղինակը՝ նշելով, որ ձախլիկության առաջացման և էվոլյուցիայի հարցում դեռևս բազմաթիվ անտեսված հարցեր կան: Այսօր չկա հստակ ու միանշանակ պատասխան այն հարցին, թե ինչն է հանդիսանում ձախլիկության պատճառը: Շարունակելով ձախլիկության առաջացման պատճառների վերլուծությունը՝ նա 1.2 «Ձախլիկության դրսևորման կենսազենետիկական հիմքերը. ժառանգականություն» հարցերն ուսումնասիրում (Ի. ՄակՄանուս, Մ. Սեդրոն և մյուսներ) է՝ մանրամասն վերլուծելով հարցի վերաբերյալ տարբեր տեսություններ, որից հետո հեղինակն անում է այսպիսի եզրակացություն. «Ժառանգականությունը կարևոր է, սակայն

ոչ միակ գործոնն է ձախլիկության ձևավորման մեջ»: Հետևելով հետազոտության նպատակին՝ ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարմանը դպրոցում, նա հատուկ ուշադրությամբ է ուսումնասիրում ձախլիկության դրսևորումը, առանձնահատկությունները մանկավարժության մեջ:

1.3 «Միջավայրի դերակատարումը և դաստիարակության դերը ձախլիկության դրսևորման հարցում», 1.4 «Ձախլիկ երեխաների հոգեբանական առանձնահատկությունները», 1.5 «Ձախլիկության դրսևորման սոցիալ-մանկավարժական առանձնահատկությունները» ենթազուխներում:

1.3 «Միջավայրի դերակատարումը և դաստիարակության դերը ձախլիկության դրսևորման հարցում»՝ նվիրված է սոցիալական միջավայրի և դաստիարակության նշանակությանը ձախլիկության դրսևորման գործում:

Հեղինակը, ուսումնասիրելով այս հարցը, նշում է, որ եթե միջավայրը բացահայտ կամ ենթաստեքստային ձևով բացասական վերաբերմունք է ցուցաբերում ձախլիկության նկատմամբ, ապա հնարավոր է, որ ձախլիկ անձը զարգացման ընթացքում սկսի կասկածել սեփական կարողություններին: Տվյալ հարցի համակողմանի վերլուծությունից հետո հետազոտողն արտահայտում է իր սեփական վերաբերմունքը՝ սոցիալական միջավայրը ձախլիկության դրսևորման հարցում հանդես է գալիս ոչ թե որպես պասիվ բաղադրիչ, այլ որպես ակտիվ ազդեցության համակարգ: 1.4 «Ձախլիկ երեխաների հոգեբանական առանձնահատկությունները» նվիրված է այդ երեխաների հոգեբանական, հոգեկան զարգացման հարցերին, հոգեբանական առանձնահատկություններին: Հատուկ ուշադրություն է դարձվել այն փաստին, որ ձախլիկության հոգեբանական դրսևորումները չի կարելի դիտարկել միայն նեյրոֆիզիոլոգիական գործոններով պայմանավորված, դրանք ներառում են նաև վարքային և հուզական մոդելներ, որոնք ձևավորվում են հասարակական նորմերին հարմարվելու ձգտման հետևանքով: Հեղինակը, ուսումնասիրելով ձախլիկ երեխաների հոգեբանական զարգացման տարբեր գործոններ, ներկայացնելով նրանց հոգեբանական առանձնահատկությունները, նորից գալիս է հետազոտությունում հնչող մի կարևոր գաղափարի՝ ձախլիկությունը բազմաշերտ երևույթ է և այն չի կարող սահմանափակվել զուտ մի գիտության բացատրություններով, այն ենթադրում է ներառում ինչպես նեյրոֆիզիոլոգիական, այնպես էլ սոցիալ-մշակութային, կրթական և հոգեբանական ընկալումների ամբողջական համադրության մեջ: Ձախլիկության երևույթը մանկավարժական ոլորտում դիտվում է 1.5 ենթազուխում՝ «Ձախլիկության դրսևորման սոցիալ-մանկավարժական առանձնահատկությունները», որը նախորդ ենթազուխի տրամաբանական շարունակությունն է: Այս հարցի ուսումնասիրությունը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ ներկայիս կրթական փոփոխություններում շեշտը դրվում է անհատականացված մոտեցման վրա, երբ չափազանց կարևոր է դառնում մշակել այնպիսի մեթոդաբանական մոտեցում, որը հաշվի առնի երեխաների բազմազանությունը: Նշելով նման երեխաների մի շարք առանձնահատկություններ՝ դյուրագրգռություն, անինքնավստահություն, ներքին լարվածություն և այլ որակներ, հետազոտողն իրավացիորեն գտնում է, որ այդ երեխաներն ունեն մանկավարժական օգնության կարիք՝

որպես ձախլիկ երեխայի արդյունավետ սոցիալ-մանկավարժական հարմարման անհրաժեշտ նախապայման և միաժամանակ՝ ապահարմարման կանխարգելման կարևոր ուղիներից մեկը: Եվ այս մոտեցումը, անշուշտ, վերախմաստավորում է մանկավարժի դերը՝ նրան դարձնելով ոչ թե վերահսկող, այլ ուղեկից՝ երեխայի անհատական զարգացման բարդ ճանապարհին: Եվ, իհարկե, չի կարելի չհամաձայնել հեղինակի այն ճշմարիտ մտքի հետ, որ միայն այսպես կարելի է ապահովել յուրաքանչյուր երեխայի լիարժեք զարգացումը, ինքնաարտահայտումը և հավասար իրավունքները կրթական գործընթացում՝ անկախ տարբեր տեսակի առանձնահատկություններից:

«Ձախլիկության երևույթը խորհրդային մանկավարժության մեջ» ներկայացված է 1.6 ենթագլխում: Վերլուծելով այս հարցը՝ հեղինակն անում է մի քանի կարևոր եզրահանգումներ՝ խորհրդային դպրոցը, հիմնվելով միօրինականացման և սոցիալական հարթեցման սկզբունքների վրա, ձգտում էր վերանայել ցանկացած դրսևորում, այդ թվում՝ ձախլիկությունը, և այդ երեխաների նկատմամբ կիրառվում էին մի շարք ոչ ճիշտ մեթոդներ, օրինակ, ստիպում էին աջ ձեռքով գրել: Սակայն, ինչպես վկայում է ատենախոսը, կան և այլ կարծիքներ (Ա.Բ. Դյաստով, Ն.Մ. Ակիմովա), որոնք բարձրաձայնում էին վերափոխման փասաների մասին: Աշխատության մեջ նշվում է, որ ձախլիկության հանդեպ իրականացվում էին քաղաքական մոտեցումներ, արտացոլվում էին ժամանակի սոցիալ-գաղափարական պահանջները:

Երկրորդ գլուխը՝ «Ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման առանձնահատկությունները», բաղկացած է հինգ ենթագլխից, որոնք խիստ տրամաբանորեն, հստակ տանում են գլխավոր գաղափարի՝ ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման առանձնահատկությունների բացահայտմանը:

2.1՝ «Սոցիալ-մանկավարժական հարմարում, նրա էությունը» ենթագլխում ներկայացվում է «հարմարում» եզրույթի համակողմանի մեկնաբանումը կենսաբանական գիտություններում, բառարաններում, հոգեբանական, մանկավարժական գիտություններում: Այնուհետև հեղինակն անդրադառնում է սոցիալական հարմարմանը, նրա էությանը, նշանակությանը մարդու կյանքում: Դիտելով հարմարումը սոցիալական մանկավարժության տեսանկյունից, որտեղ հարմարումը դիտարկվում է ոչ միայն որպես անհատի հարմարվողականության դրսևորում, այլ որպես նրա սոցիալական սուբյեկտ դառնալու գործընթաց՝ Ա. Խլոպուզյանը կիրառում է այս մոտեցումը ձախլիկ երեխաների դեպքում և անում շատ ճիշտ գիտականորեն հիմնավորված եզրահանգում, որ այստեղ հատկապես կարևոր է ոչ միայն հարմարվելու, այլև ճանաչված ու ներառված լինելու գործընթացի ապահովումը:

Հիմնախնդրի ուսումնասիրումն ավելի խորանում է, սոցիալ-մանկավարժական հարմարումն ավելի հստակեցվում է շնորհիվ այն գիտական տեսությունների, աշխատությունների, որոնք համակողմանիորեն վերլուծված են 2.2 ենթագլխում՝ «Սոցիալ-մանկավարժական հարմարումը ձախլիկության ֆենոմենի տեսանկյունից»: Այստեղ հեղինակն անդրադարձել է այնպիսի գիտնականների աշխատանքների, ինչպիսիք են՝ Դ.Բ. Էլկոնինը, Բ.Գ. Անանևը, Մ. Մարկեբը և մյուսները: Այս և մյուս հեղինակների

տեսությունների վերլուծությունները, ինչպես նաև հեղինակի անձնական մոտեցումը փաստում են, որ ձախլիկ երեխաների արդյունավետ սոցիալ-մանկավարժական հարմարումը կախված է աջակցող միջավայրից և անձի հոգեբանական, մտավոր կարողությունների ուղղորդված զարգացումից:

Ձախլիկ երեխաների սոցիալական հարմարումը միանշանակ չի կարող արդյունավետ լինել, եթե հաշվի չի առնվում ընտանիքի դերը: Եվ այս կարևոր հարցը ներկայացված է 2.3 ենթագլխում՝ «Ձախլիկ երեխաների սոցիալական հարմարման խնդիրն ընտանիքում»: Հեղինակն ընտանիքը համարում է երեխայի կյանքի առաջին և հիմնարար սոցիալական միջավայրը, որի վերաբերմունքը ձախլիկ երեխայի դեպքում կարող է ունենալ ինչպես պաշտպանող ու աջակցող, այնպես էլ ճնշող ազդեցություն՝ կախված այն բանից, պարզաբանում է հեղինակը, նաև թե որքանով են ծնողները տեղեկացված երեխայի ներքոֆիզիոլոգիական առանձնահատկությունների մասին:

Շատ կարևոր հարցի ուսումնասիրման մասին է վկայում այն հանգամանքը, որ հեղինակը նշում է նաև, թե ինչպիսին պետք է լինեն ընտանեկան մթնոլորտը, տրամադրությունը, մշակութային արժեքները, լեզվաբանական կարծրատիպերը և այլն, որոնք, ըստ հեղինակի, ստեղծում են աջակցող միջավայր: Այս ենթագլխի տեսական վերլուծության տրամաբանական շարունակությունն է 2.4՝ «Ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարման գործընթացը հանրակրթական դպրոցում»: Ատենախոսք քննության է առել մի շարք կարևոր հարցեր՝ «մանկավարժական աջակցություն», «հոգեբանամանկավարժական օգնություն» և այլն: Նա հստակեցնում է նաև «մանկավարժական աջակցություն» և «մանկավարժական օգնություն» հասկացությունները, որոնք շատ հաճախ որպես հոմանիշներ են կիրառվում, սակայն, ըստ հեղինակի, բոլորովին նույնը չեն:

Աշխատանքի այս մասում հատուկ ուշադրություն է դարձվում այս երեխաների մոտ դպրոցում դժվարությունների առաջացմանը միջանձնային հարաբերություններում, գրելու մեջ և այլն: Հեղինակը ոչ միայն բարձրացնում է խնդիրը, այլ նաև կոնկրետ նշում է մանկավարժական օգնության բովանդակությունը, մի շարք պահանջներ է ներկայացնում, որոնք կօգնեն ճիշտ կազմակերպել աշխատանքները, օրինակ՝ գրասեղանների դասավորությունը, գրատախտակի դիրքը, ներառական ուսուցման միջավայրի ստեղծում, որտեղ ձախլիկ երեխան հաստատ կունենա ակտիվ մասնակցություն, կստանա համապատասխան օգնություն՝ զարգացնելու գիտելիքները, ստեղծագործական ներուժը և այլն: Մեծ մարդկային հոգատարությամբ և մանկավարժական ապրումակցմամբ է ուսումնասիրված այս հարցը:

Երկրորդ գլուխն ունի տրամաբանական ավարտ. խոսելով սոցիալ-մանկավարժական հարմարման մասին, հեղինակը չէր կարող չնշել 2.5 ենթագլխում «Ձախլիկ երեխաների ոչ արդյունավետ սոցիալ-մանկավարժական հարմարման գործընթացի թողած հետևանքները և դրանց շտկումները»: Հանգամանորեն վերլուծելով այս հարցը՝ ատենախոսքը նշում է ոչ արդյունավետ հարմարման գործընթացի հետևանքները՝ գրության, ընթերցանության, ուշադրության, մոտիվացիայի, ինքնագնահատականի

նվազման մեջ և այլն: Այս հարցը մանրակրկիտ ուսումնասիրելու նպատակով, տարբեր տեսանկյուններից դիտելու համար վերլուծվում են մի շարք հայտնի հեղինակների՝ Իրվին Զ. Սարասոն և Բարբարա Ռ. Սարասոնի, Վ.Վ. Կոզանի, Ա.Ա. Ռեանի, Կ.Դ. Ուշինսկու և մյուսների աշխատությունները: Վերլուծության արդյունքում նշվում են ապահարմարման պատճառով առաջացած մի շարք համակարգային խնդիրներ՝ ուսումնական ձախողումներ, էմոցիոնալ լարվածություն և այլն:

Ա. Խլոպուգյանը ոչ միայն նշում է հետևանքները, այլ նաև իրեն բնորոշ հետևողականությամբ տալիս է լուծման ճանապարհները, օրինակ՝ ուսուցիչների մեթոդական պատրաստվածության բարձրացումը, վերապատրաստումները, ինչպես նաև կանխարգելումից անցնել դեպի վերականգնողական մոդել: Այս ենթագլուխն ավարտվում է ևս մի գիտականորեն հիմնավորված եզրահանգումով՝ ձախլիկ երեխաների մոտ առաջացած ապահարմարումը հնարավոր է շտկել միայն համադրական մոտեցմամբ՝ ուսուցչի պրոֆեսիոնալ վերաբերմունք, ընտանիքի աջակցություն, մասնագիտական միջամտություն և ներառական միջավայրի ձևավորում: Կարծում ենք՝ սա ամենաարդյունավետ միջոցն է ոչ արդյունավետ սոցիալ-մանկավարժական հարմարման գործընթացի թողած հետևանքների շտկման մեջ:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծություն», ներկայացված է հիմնախնդրի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծությունը: Այս գլուխը, մեր կարծիքով, աչքի է ընկնում հստակ, գիտականորեն հիմնավորված կառուցվածքով՝ հետազոտության գլխավոր նպատակ, տարբեր հարցաթերթիկների ներկայացում, 31 աղյուսակ, 31 զծապատկեր:

Սոցիոլոգիական հարցումներին մասնակցել է 273 ռեսպոնդենտ, որից 173-ը՝ ձախլիկ երեխա, 68-ը՝ ուսուցիչ, 32-ը՝ ծնող: Սույն սոցիոլոգիական հետազոտությունը բնութագրական տեսակ ունի տվյալների հավաքագրման առումով, իսկ նպատակի առումով՝ կիրառական:

Անցկացված սոցիոլոգիական հարցումներն արդյունքներն աչքի են ընկնում հուսալիության առումով, որն ապահովել է բովանդակային հավաստիության մեթոդը, և դրա հիման վրա են մշակվել հարցերը: Հավաստիության քանակական գնահատումն իրականացվել է Քրոնբախի ալֆայի միջոցով, որի արդյունքը կազմել է 0.90, ինչը վկայում է գործիքի բարձր ներքին համահունչության մասին:

Ուշագրավ է, որ սոցիալաբանը մասնակցել են ՀՀ 6 մարզերի աշակերտներն ու ուսուցիչները, որում ընդգրկված է եղել բավականին լայն տարիքային շրջանակ՝ 10-56 տարեկան, վերլուծվել են տվյալները նաև ըստ սեռի՝ ձախլիկ աշակերտների շրջանում, և ըստ հանրակրթական դպրոցի կրթական աստիճանի, ինչը նպաստում է սոցիալաբան արդյունքների վերաբերյալ ավելի հստակ պատկերացում ստանալուն:

«Հարցաթերթիկ աշակերտների համար»-ը վերաբերում է դպրոցում ձախլիկ երեխաների հնարավոր վարքագծային դրսևորումներին և հարմարման գործընթացում առաջացած դժվարություններին:

Հարկ է նշել, որ ստացված տվյալները համապատասխանում են տեսական վերլուծության արդյունքներին, այդ տվյալներն ընդգծում են անհրաժեշտությունը՝ հարմարեցնել ուսուսման փառայարը ձախիկ երեխաների կարիքներին՝ ներառյալ մեթոդական նյութերը, և ոչ միայն:

Ուսուցիչների շրջանում իրականացված սոցիալոգիայի հարցաթերթիկը բաղկացած էր 8 հարցից, որոնք ընդգրկում էին հարցեր ինչպես ձախիկության պատճառների, այնպես էլ դրա առանձնահատկությունների, սոցիալականացման և հասարակության մեջ ինտեգրվելու մասին և այլն: Նշենք, որ բոլոր ստացված պատասխանները մեկնաբանվել են և հիմնավորվել հետազոտողի կողմից: Եվ արդյունքների վերլուծությունն ավարտվում է գիտականորեն հիմնավորված, հստակ, հեղինակի կարծիքով, որ կա անհրաժեշտություն զարգացնել ուսուցչական կազմի կարողությունները՝ մասնավորապես նյարդամանկավարժական և ուսուցման անհատականացված մոտեցումների ուղղությամբ:

Սոցիալոգիայի չէին լինի լիարժեք, եթե հեղինակը տեսական վերլուծություններ անելիս չընդգրկեր նաև ծնողներին: Համաձայն ստացված արդյունքների՝ ծնողների մեծ մասն ընդունում է ձախիկության գենետիկական հիմքերը, կարևորում է հատուկ մոտեցման անհրաժեշտությունը, սակայն որոշ հարցերի շուրջ կան անորոշություններ, ինչը և պահանջում է մանկավարժական և գիտական իրազեկում:

Սոցիալոգիայի արդյունքներն ավելի նշանակալի են դառնում շնորհիվ հետազոտողի կողմից արված համադրված վերլուծության և կառուցողական առաջարկությունների: Այս գլխի ուսուսման հարցերը մեզ լիովին համոզեց, որ սոցիոլոգիական հարցումների արդյունքները հաստատում են հետազոտությունում ներկայացված տեսական դրույթները:

Ատենախոսությունն ավարտվում է եզրակացություններով, որոնք բաղկացած են 7 կետից և լիովին համապատասխանում են հետազոտության խնդիրներին, նպատակին, արտացոլում են հետազոտության հիմնական արդյունքները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը ձևակերպված են հստակ, գիտականորեն, և դրանք կարելի է համարել հետազոտության տրամաբանական ավարտ:

Անհրաժեշտ է նշել, որ օգտագործված գրականության ցանկը բավականին հարուստ է (76 աղբյուր), բազմազան է լեզուների առումով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, և կան նաև համացանցային աղբյուրներ:

Հարկ ենք համարում նշել, որ ատենախոսությունը ներկայացված է գիտական, հստակ և հասկանալի լեզվով: Տերմինաբանական ապարատը կիրառվում է ճշգրիտ և համահունչ, ինչը նպաստում է հետազոտության բովանդակության լիարժեք ընկալմանը:

Ատենախոսությունը դիտարկվում է որպես էական ներդրում հանրակրթության մակարդակում տեղի ունեցող բարեփոխումներում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլվել է սեղմագրում և հրատարակված հոդվածներում:

Հետազոտական աշխատանքի վերաբերյալ կան մի քանի նկատառումներ.

- Ատենախոսության մեջ որոշ էջեր ծանրաբեռնված են մեջբերումներով (օրինակ՝ 21, 23, 46 և այլն):
- Աշխատանքում նկատվում են որոշ մտքերի կրկնություններ:
- Աշխատանքը գերծ չէ տեխնիկական վրիպակներից:
- Ատենախոսության մեջ կան մի շարք մեթոդական առաջարկություններ ձախլիկ երեխաների հետ աշխատելու համար հանրակրթական դպրոցում, ընտանիքում: Առաջարկում ենք հետագայում տպագրել դրանք՝ որպես մեթոդական ուղեցույց ուսուցիչների համար:

Վերոնշյալ նկատառումները չեն սովերում ատենախոսության գիտական նշանակությունը:

Ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական գիտական հետազոտությանն առաջադրվող պահանջներին: Հետազոտությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն, համապարփակ, արժեքավոր աշխատանք, որն ունի կառուցվածքային ամբողջականություն, տրամաբանական հաջորդականություն, արժեքավոր է ժամանակակից գիտական և կրթական ոլորտում, պարունակում է գիտական նորույթ, որն արտահայտվում է ուսումնասիրվող խնդրի նոր մոտեցումներով և հիմնավորված եզրահանգումներով: Հետազոտության արդյունքները կնպաստեն ուսումնասիրվող հիմնախնդրի տեսական հիմքերի հարստացմանը, իսկ ներկայացված առաջարկությունների կիրառելիությունը, անշուշտ, կբարելավի կրթական պրակտիկան:

Անահիտ Հրանտի Խլոպուզյանի՝ «Ձախլիկ երեխաների սոցիալ-մանկավարժական հարմարումը հանրակրթական դպրոցում» խորագրով գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին ԺԳ.00.01 – «Մանկավարժական տեսություն և պատմություն» մասնագիտությամբ:

Ընդդիմախոս՝



Ռուզաննա Արամայիսի Մարդոյան
Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռ. Մարդոյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ՝

Շիրակի պետական համալսարանի գիտական քարտուղար,
գիտ. թեկն., դոցենտ՝ Կարինե Պետրոսյան



08 01 2026թ.